



Հասցե՝ ք. Երևան, 0010, Նալբանդյան 13
Էլ փոստ՝ info@ssa.am
Հեռ.՝ (060) 654 013, (010) 52 15 94
Մամլո քարտուղար՝ Տաթևիկ Խաչատրյան
Հեռ.՝ (060) 654 011
Հասարակայնության հետ
կապերի բաժնի պետ՝ Նոնա Սարգսյան
Հեռ.՝ (060) 654 020. (095) 51 14 17

Մամլո հաղորդագրություն

Հովհաննես Սահակյանի աշխատանքային այցն Արցախի Հանրապետություն շարունակվում է

ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության պետ Հովհաննես Սահակյանի գլխավորած պատվիրակությունը երկօրյա աշխատանքային այցով Արցախի Հանրապետությունում էր:

Պատվիրակության կազմում էին Ծառայության պետի տեղակալներ Ազնեսա Աղաբաբյանն ու Ռոբերտ Դիլբարյանը:

Աշխատանքային այցի երկրորդ օրվա շրջանակներում պատվիրակության անդամները հանդիպել են ԼՂՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարար Սամվել Ավանեսյանի և նախարարության աշխատակիցների հետ:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են սոցիալական ոլորտին վերաբերող մի շարք խնդիրներ և հարցեր, որոնք հանգամանալից քննարկվել են Ծառայության պետ Հովհաննես Սահակյանի և Նախարար Սամվել Ավանեսյանի հետ և տեղում ստացել համապատասխան լուծումներ:

Երկու հայկական պետությունների սոցիալական ոլորտի լավագույն մասնագետները միասին քննարկել են «Էլ.կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի Արցախի Հանրապետությունում գործարկման առավելությունները:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության պետ Հովհաննես Սահակյանը գոհունակությամբ ընդգծել է, որ ձևավորված սերտ

համագործակցությունը Հայաստանի և Արցախի պետական մարմինների միջև կրելու է շարունակական բնույթ:

ՄԱՊԾ պետը նշել է, որ Ծառայության անունից ԼՂՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության իրենց գործընկերներին են նվիրում 5 համակարգիչ, որոնք կծառայեն հետագա համատեղ ծրագրերի իրականացմանը:

Հանդիպման ավարտին կողմերը քննարկել են երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հարցեր, որոնք վերաբերել են փորձի փոխանակմանը և փոխայցերին:

Նույն օրը Ծառայության պետ Հովհաննես Սահակյանն ու պատվիրակության անդամներ՝ Նախարար Սամվել Ավանեսյանի ուղեկցությամբ այցելել են Ալիշան գյուղ, որտեղ այժմ բնակվում են Թալիշի բնակիչները:

Թալիշցիների հետ հանդիպման Ծառայության պետը ձեռնունայն չէր գնացել և 24 ընտանիքի 54 երեխայի հանձնվեցին իրենց անվանական նվերները՝ տաք հագուստ և խաղալիքներ:

<<Այս գաղափարը առաջացել էր այն բանից հետո, երբ 2016 թվականի օգոստոսին հերթական անգամ առաջնագիծ և սահմանամերձ գյուղեր այցելության ընթացքում ծանոթացա մի ընտանիքի հետ, որն ունի երկու հրաշալի երեխա՝ Նվերը և Հայկուհին: Այս տարի ևս որոշել էի այցելել նրանց և գնահատելով գյուղի կարիքները՝ բերել նաև գյուղի մյուս երեխաների համար տաք հագուստ ու անհրաժեշտ իրեր>>,-ասել է Հովհաննես Սահակյանը:

Գյուղի բնակիչների ջերմ ընդունելությունից հետո Ծառայության պետն երեխաներին մաղթել է առողջություն, երջանկություն, հաջողություն և հորդորել է որպեսզի լավ ուսմամբ, օրինակելի վարքագծով և ծնողների նկատմամբ մեծագույն հարգանքով մշտապես ուրախացնեն բոլորին: